ՊԱՏՄՈՒՄ ԵՆ ԱԿԱՆԱՏԵՍ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆՆԵՐԸ

Երեւան, 6 Մայիսի, Մ.Տ.Կ.- Ստորեւ ներկայացնում ենք 3 ականատես զինուորականների վկայութիւնները՝ Գետաշէնում կատարուած ոճրագործութիւնների մասին.

«Ես Մայիսի 1ին գտնւում էի Տոդան գիւղի պահակակէտում, երբ պարետից հրաման ստացայ մեկնել Գետաշէն՝ վիրաւորներին այնտեղից դուրս բերելու համար։

Սպասելով զրահամեքենայի եւ աւտոմատաւորների ժամանմանը, ես երեկոյեան ժամը 8ի մօտ ճանապարհուեցի Գետաշէն։ Տեղ հասանք բաւական ուշ։ Հանդիպեցինք գիւղխորհրդի նախագահին եւ միասին գնացինք հիւանդանոց։ Հիւանդանոցում ես տեսայ մարդկանց, ծերերի, երիտասարդների դիակներ՝ սպանուած հրազէնով, կացնահարուած, կտրուած ականջներով։ Այնտեղ կար 18 դիակ։

Հիւանդանոցում կային նաեւ 7 վիրաւորներ եւ ծեծուածներ։ Նրանցից մէկի գանգամաշկն էին հանել։ Այնտեղ մի կին կար վիրաւորուած ձեռքով։ Նա պատմեց, որ իր ձեռքի վրայ կրակել էին այն բանի համար, որ հրաժարուել էր մատից մատանին հանել։ Գիւղխորհրդի նախագահի ասելով՝ ՕՄՕՆականները ձերբակալել էին 47 բնակիչների եւ պահանջել, որ երէ 48 ժամուայ ընթացքում գիւղը չդատարկուի, պատանդները կը գնդակահարուեն։ Նա պատմեց նաեւ, որ պատանդների մի մասը անմարդկային ծեծի էին ենթարկուել, նրանց ստիպել են գրել եւ ստորագրել, որ իրենք հայ գրոհայիններ են։ Իմ ներկայութեամբ 60 տարեկան երկու պատանդ բերեցին, որոնք շարժուել անգամ չէին կարողանում եւ բժշկական գննման ժամանակ ցաւից բղաւում էին։ Ներկայումս 15 մարդու ճակատագիր անյայտ է։

Այս բոլոր գործողութիւնները կատարւում էին ադրբեջանական ՆԳՆ ՕՄՕՆականների ուժերով, որոնք բնակիչների վկայութեամբ անարգել սպանում էին ու թալանում, ծաղրուծանակի ենթարկում։

Դժուարութեամբ տեղաւորելով 5 դիակ եւ վիրաւորներին, մենք շարժուեցինք դէպի Շահումեանի շրջան։ Գետաշէնից դուրս գալիս լեռան վրայից տեսանք, որ այրւում են հարեւան Մարտունաշէն գիւղի տները։ Ամբողջ ճանապարհին կանգնած էին տանկեր, զրահամեքենաներ եւ խորհրդային բանակի զինուորներ։ Նրանց հետ էին նաեւ մեծ քանակութեամբ ՕՄՕՆականներ։

Լրացնելով այս ամենին՝ հաղորդում եմ, որ Գետաշէնի եւ Մարտունաշէնի դէմ զինուած գործողութիւնները սկսուել են խորհրդային բանակի զօրամիաւորումների մուտքով, որից յետոյ գիւղեր են ներխուժել ՕՄՕՆականները»։

«Ես Մայիսի 1ին պարետից հրաման ստացայ մեկնել Գետաշէն եւ Մարտունաշէն։ Ղուշչի Արմաւիր գիւղի մատոյցներում մեր ճանապարհը փակեցին զինուորական եւ ոստիկանական հագուստներով մարդիկ։ Նրանք մեզ կանգնեցրին եւ հարցրին, թէ ուր ենք գնում եւ ինչ նպատակով։ Ես պատասխանեցի, որ մենք շարժւում ենք դէպի Մարտունաշէն եւ որ մեզ հրամայուած է վերցնել հիւանդանոցում գտնուող վիրաւորներին, կանանց եւ երեխաներին։

Սպան ինձ հրաւիրեց կապի հանգոյց, որտեղ սկսեցինք պարզել, թէ ովքեր ենք մենք։ Այս բոլորից յետոյ սպաներից մէկը, որը ներկայացաւ որպէս գնդապետ Մահմեդով, խուրհուրդ տուեց չշարունակել ճանապարհը, քանի որ այնտեղ ուժեղ փոխհրաձգութիւն է սկսուել։

Շար. էջ 4 →

Համաձայնեցուեց, որ մենք կը շարունակենք մեր ճանապարհը առաւօտ վաղ։ Այդպէս էլ եղաւ. շարժուեցինք առաւօտեան 7:30ին։

Հասնելով Մարտունաշէն՝ մենք այնտեղ ընդհարման հետքեր տեսանք՝ հրդեհուած տներ, շրջուած մեքենաներ, ծերերի, որոնք արցունքն աչքերին խնդրում էին պաշտպանել իրենց։ Այնուհետեւ մենք հասանք Գետաշէն եւ հիւանդանոցից վերցրինք 14 մարդ, այդ թւում 5 սպանուած, վիրաւորներ, կանայք եւ երեխաներ։ Գիւղից դուրս գալիս Մարտունաշէնից սկսեցին հրանօթներով կրակել, իսկ Կամո գիւղի մօտ մենք հանդիպեցինք տանկերով, զրահամեքենաներով, աւտոմատաւորներով ուժեղացուած պահակակէտի։ Առանց բարդութիւնների մենք այն անցանք։

Գետաշէնի հիւանդանոցում իմ տեսած վիրաւորները հիմնականում ծերեր, կանայք ու երեխաներ էին, սպանուածներին նայելն ահաւոր էր։ Երբ մենք դուրս էինք գալիս գիւղից, բնակիչները աղաչում էին իրենց անպաշտպան չթողնել. ասում էին, որ ՕՄՕՆականները եւ զինուորները կը սպանեն բոլորին։

Կամո գիւղի մօտ մենք հանդիպեցինք զօրամիաւորման, տանկերի եւ զրահամեքենաների վրայ նստած էին ռուս զինուորներ ու սպաներ»։

«Ժամը 23ին մենք հասանք Ղուշչի Արմաւիրի պահակակէտը, որտեղ մեզ կանգնեցրին ՕՄՕՆականները։ Այստեղ գիշերելուց յետոյ մենք մեկնեցինք Գետաշէն։ Ռադիոկապով պայմանաւորուելով տեղի ղեկավարութեան հետ՝ մենք հասանք հիւանդանոց, որի մօտ մարդիկ էին հաւաքուել։ Նրանց մէջ հիմնականում ծերեր էին, կանայք ու երեխաներ, որոնք հեռացել էին իրենց տներից։ Տան մօտ սպանուածներ կային, ամէնուրեք զնդակոծութեան հետքեր կային։ Գետաշէնից հեռանալիս մենք տեսանք այրուող Մարտունաշէնը, տանկեր, զրահամեքենաներ, զինուորներ եւ ՕՄՕՆականներ»։